ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

մարտի 2025 թվականի №-Ա

«ԻՇՏԻԿՈՒՆԻ ԱՐԵՎԱՅԻՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականի հուլիսի 7-ի №227-Ա որոշմամբ «ԻՇՏԻԿՈՒՆԻ ԱՐԵՎԱՅԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Լճաշեն Սոլար» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0746 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0746 լիցենզիա) պայմանների 14-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2024 թվականի ապրիլի 8-ը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ Նախագիծ), ինչը, սակայն, չի ներկայացվել, որի հետևանքով նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2025 թվականի հունվարի 8-ը,

բ) Ընկերությունը, մինչև 2025 թվականի հունվարի 8-ը, Հանձնաժողով չի ներկայացրել Նախագիծը, ուստի Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2025 թվականի հունվարի 14-ից հարուցել է վարչական

վարույթ՝ Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 14-ի №ՄՄ/34.3-Մ2-12/141-2025 գրությամբ,

գ) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում՝ նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, և միևնույն ժամանակ, 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ Կարգի №3 հավելվածի համաձայն, երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

դ) Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը, Կարգի համաձայն, 2-րդ անգամ երկարաձգվել է,

ե) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում իր՝ 2025 թվականի հունվարի 30-ի գրությամբ, ըստ էության, ընդունել է թույլ տված խախտումը և հայտնել է, որ ԼԷ №0746 լիցենզիայի պայմաններով սահմանված ժամկետում Կայանի կառուցման նախագծային փաստաթղթերի պետական համալիր փորձաքննության եզրակացությունը Հանձնաժողով չի ներկայացվել Կայանի կառուցման նախագծի համար հիմք հանդիսացած փաստաթղթերի ստացման գործընթացում առաջացած խոչընդոտների պատճառով: Միաժամանակ, Ընկերությունը 2025 թվականի փետրվարի 14-ի գրությամբ Նախագիծը ներկայացրել է Հանձնաժողով,

զ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը, ԼԷ №0746 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված և երկարաձգված ժամկետում՝ մինչև 2025 թվականի հունվարի 8-ը, Հանձնաժողով չի ներկայացրել Նախագիծը և,

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, նշված ժամկետը համարվել է 2-րդ անգամ երկարաձգված մինչև 2025 թվականի հուլիսի 8-ը, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը և Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել Ընկերությանը՝ Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ ԼԷ №0746 լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգված համարվելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «ԻՆԵԿՈԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի հունիսի 28-ի №G4142 գրությամբ ներկայացված №EA23/00574 երաշխիքի համաձայն երաշխավորված 7 500 000 (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարից 3 750 000 (երեք միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 7 500 000 (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2025 թվականի օգոստոսի 22-ը գործողության ժամկետով:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ԼԷ №0746 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված՝ Նախագծի ներկայացման ժամկետը համարվել է 2-րդ անգամ երկարաձգված մինչև 2025 թվականի հուլիսի 8-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
մարտի 2025թ.